ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2013 թվականի N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ, 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՆԵԼՈՒ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի " Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին գյուղատնտեսական համատարած հաշվառում, 2013 թվականին փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում անցկացնելու և 2014 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման համապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ ստեղծելու մասին" թիվ 402-Ն որոշումը՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում գյուղատնտեսական համատարած հաշվառումն անցկացնել 2014 թվականի հոկտեմբերի 11-ից 31-ը ներառյալ:
2. Փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառումն անցկացնել 2013 թվականի հոկտեմբերի 11-ից 31-ը ներառյալ, ՀՀ Տավուշի մարզի Բերդի քաղաքային համայնքում, Գանձաքարի և Այգեհովիտի գյուղական համայնքներում:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում 2014 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման մարզային հանձնաժողովի կազմը՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Առաջարկել Բերդի քաղաքային, Գանձաքարի և Այգեհովիտի գյուղական համայնքների ղեկավարներին՝ աջակցել փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստմանն ու անցկացմանն՝ ամբողջ ժամանակահատվածում:
5. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում 2014 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման մարզային հանձնաժողովին՝ հաշվառման գործընթացի ընթացքում առաջնորդվել հաստատված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

23 մայիսի 2013 թվական
Ք.Իջևան

Հավելված N 1
ՀՀ Տավուշի մարզպետի 2013 թվականի
մայիսի 23-ի N 56-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա.Ղուլարյան - Մարզպետ (հանձնաժողովի նախագահ)

Ա.Աչինյան - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալության պետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)

Ա.Գևորգյան - ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության մարզի վարչության պետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)

Վ.Ղալումյան – Իջևանի քաղաքապետ (համաձայնությամբ)
Ա.Սանթրոսյան – Դիլիջանի քաղաքապետ (համաձայնությամբ)
Վ.Ամիրաղյան – Նոյեմբերյանի քաղաքապետ (համաձայնությամբ)
Հ.Մանուչարյան – Բերդի քաղաքապետ (համաձայնությամբ)
Գ.Եգանյան – Այրումի քաղաքապետ (համաձայնությամբ)

Վ.Սուքոյան - Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար

Վ.Կարապետյան - «Գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)

Մ.Գալստյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության մարզային մասնագետ

Վ.Աբրահամյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային կենտրոնի տնօրեն

Կ.Խաչատրյան - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Իջևանի տարածքային ստորաբաժանման ղեկավար

Վ.Գալստյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի մարզային կենտրոնի պետ

Վ.Սարգսյան - Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Մ.Մխիթարյան - Մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Հ.Ավալյան - Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ (հանձնաժողովի քարտուղար)

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.ԴԱՎԹՅԱՆ